

ՄԱՍԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Փետրվարի 18-ին Հ. Թումանյանի թանգարանում տեղի ունեցավ թանգարանի արևային ՖՎ կայանի գործարկման մեկնարկի պաշտոնական արարողությունը

Հայ մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի ծննդյան տարեդարձի նախօրեին տեղի ունեցավ արարողություն, որով ազդարարվեց անվանի բանաստեղծի թանգարանի արևային ՖՎ կայանի գործարկման մեկնարկը:

Նախորդ տարի «Էյջ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Բանկ) տոնեց իր 25 ամյակը: Այդ առթիվ կազմակերպած ի թիվս այլ միջոցառումների Բանկը որոշեց հանդես գալ այնպիսի նախաձեռնությամբ, որով կարտահայտեր իր նվիրվածությունը քաղաքին, որտեղ երկար տարիներ գործունեություն է ծավալել: Այդ համատեքստում որոշում կայացվեց ֆինսական միջոցներ ուղղել մշակույթի ոլորտում առկա հիմնախնդիրների լուծմանը՝ ծառայեցնելով դրանք հայկական որևէ մշակութային օջախի պահպանմանն ու կայուն զարգացման ապահովմանը: Հավատարիմ լինելով իր ռազմավարությանը և կայուն արժեքների ստեղծմանը՝ «Արևային Էներգիան ի շահ մշակութային ժառանգության» ծրագրի շրջանակում Բանկը ֆինանսական օժանդակություն հատկացրեց «Էներգետիկայի հայկական գործակալություն» հիմնադրամին՝ որպես առաջին շահառու ընտրված Թումանյանի թանգարանը արևային ՖՎ կայանով զինելու նպատակով:

Ծրագրով Հովհ. Թումանյանի թանգարանի տանիքին տեղադրվեց 20,08 կՎտ դրվածքային հզորությամբ արևային ֆոտովոլտային համակարգ, որի գործարկման արդյունքում թանգարանն այսուհետ կխնայի էլեկտրաէներգիայի համար նախատեսված տարեկան ողջ ֆինանսական միջոցները՝ ուղղելով դրանք այլ կարևոր խնդիրների լուծմանը: Կողմերի որոշմամբ խնայված միջոցներով կիրառործվի մեկ այլ երկարաժամկետ նախագիծ՝ «Հովհ. Թումանյանի անձնական գրադարանի թվայնացում և էլեկտրոնային գրադարանի ստեղծում» ծրագրի:

«Հովհ. Թումանյանի թանգարան» ՊՈԱԿ-ի տնօրենի ողջույնի խոսքից հետո իրենց էլույթներում «Էյջ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի գլխավոր գործադիր տնօրեն Իրինա Սեյլանյանը և «Էներգետիկայի հայկական գործակալություն» հիմնադրամի տնօրեն Լուիզա Վարդանյանը անդրադարձան ծրագրի նպատակներին և դրա ազդեցությանը:

Միջոցառմանը ներկա էին նաև ներկայացուցիչներ ՀՀ կառավարությունից, Երևանի քաղաքապետարանից, ինչպես նաև ծրագրի աջակիցներն ու այլ հյուրեր:

Նշենք, որ «Էներգետիկայի հայկական գործակալություն» հիմնադրամը տարեվերջին մեկնարկեց մշակութային ժառանգության պահպանմանն ուղղված՝ «Արևային Էներգիան ի շահ մշակութային ժառանգության» նախաձեռնությունը, որը հնարավորություն կտա նվազեցնել պատմական, մշակութային և ազգային նշանակության օբյեկտների էլեկտրաէներգիայի ծախսերը, և խնայված միջոցներն ուղղելու հնարավոր հիմնախնդիրների



լուծմանը, որն իր հերթին կապահովի կայուն զարգացում և ներդրումներ կլիմայի փոփոխության ոլորտում:

HSBC Խումբ

HSBC Holdings plc-ը՝ HSBC Խմբի ընկերության գլխամասը, գտնվում է Լոնդոնում: Խումբը ծառայություններ է տրամադրում 64 երկրներում և տարածաշրջաններում՝ Եվրոպայում, Ասիայում, Հյուսիսային և Լատինական Ամերիկայում, ինչպես նաև Մերձավոր Արևելքում և Հյուսիսային Աֆրիկայում: HSBC-ն հանդիսանում է աշխարհի ամենախոշոր և հզոր ֆինանսական կառույցներից մեկը, որի ակտիվները 2020թ. մարտի 31-ի դրությամբ կազմել են 2,918 միլիարդ ԱՄՆ դոլար:

HSBC Հայաստան

«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ը հիմնադրվել է 1996թ-ին: Բանկը համատեղ ձեռնարկություն է, որի 70%-ը պատկանում է HSBC Խմբին, իսկ 30%-ը՝ արտերկրի հայ գործարարի: Էյչ-Էս-Բի-Սի Հայաստանը սպասարկում է շուրջ 30 000 հաճախորդի Երևան քաղաքում գտնվող իր 8 գրասենյակների և մոտ 362 աշխատակիցների միջոցով: 2020թ.-ի մարտի 31-ի դրությամբ բանկի ակտիվները կազմել են 298 միլիարդ ՀՀ դրամ ներառյալ Էյչ-Էս-Բի-Սի Բանկ ՓԲ-Էլ-Սի Լոնդոնի կողմից Բանկի միջնորդությամբ տրամադրված վարկեր:

«Էներգետիկայի հայկական գործակալություն» հիմնադրամ

«Էներգետիկայի հայկական գործակալություն» հիմնադրամը ստեղծված է աջակցելու ՀՀ Էներգետիկ համակարգի կայուն զարգացմանը: Հիմնադրամը գիտելիքահենք կենտրոն է, որը համախմբում է ոլորտի միջազգային և տեղական փորձագետներին: Այն գործունեություն է ծավալում Էներգետիկայի ոլորտի ամբողջ շրջանակում՝ ծառայելով որպես աջակից, միջնորդ և խորհրդատու պետական և մասնավոր հատվածների համար: